ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան 1փող.թիվ 2, Հեռ. (094) 519030 , hatsavan.kotayk@mta.gov.am

N 238
23 հոկտեմբեր 2020թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2020թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 51-Ա և հոկտեմբերի 22-ի թիվ 52-Ա որոշումները:

Առդիր՝ **3** թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան
Հեռ./093-212366/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 51-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Արամ,Անուշ,Արևիկ,Սասուն Սարգսյանների դիմումը,որով ցանկություն են հայտնել օրինականացնել համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Հացավան համայնքի 1փող.4փկղ.թիվ 5 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում /ծածկագիր 07-041-0022-0022/ 2010 և 2014 թվականներին ինքնակամ կառուցված շինությունները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և որակավորված անձի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է,որ Արամ,Անուշ,Արևիկ,Սասուն Սարգսյանները համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Հացավան համայնքի 1փող.4փկղ.թիվ 5 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2010 և 2014թվականներին ինքնակամ կառուցել են՝բնակելի տուն 142.9քմ մակերեսով, կաթսայատուն 5.16քմ մակերեսով, զուգարան 1.32քմ մակերսով, խորդանոց 19.32քմ մակերեսով, ծածկ 6.0քմ մակերեսով, անասնաշենք 46.4քմ մակերեսով, ծածկ 14.83քմ մակերեսով, ծածկ 27.2քմ մակերեսով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9,10,11,13 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն,որ Արամ,Անուշ,Արևիկ,Սասուն Սարգսյաններին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Հացավան համայնքի 1փող.4փկղ.թիվ 5 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքացիական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

որոշում եմ

1. Քաղաքացիներ Արամ,Անուշ,արևիկ,Սասուն Սարգսյաններին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հացավան համայնքի 1փող.4փկղ.թիվ 5 հասցեում ինքնակամ կառուցված՝142.9քմ մակերեսով բնակելի տունը, 5.16քմ մակերեսով կաթսայատունը, 1.32քմ մակերեսով զուգարանը, 19.32քմ մակերեսով խորդանոցը, 6.0քմ մակերեսով ծածկը, 46.4քմ մակերեսով անասնաշենքը, 14.83քմ մակերեսով ծածկը և 27.2քմ ամակերեսով ծածկը համարել օրինական:

2. Պարտավորեցնել քաղաքացիներ Արամ,Անուշ,Արևիկ,Սասուն Սարգսյաններին 2010 և 2014թվականներին կառուցված շինությունների համար համայնքային բյուջեի 900105220215 հաշվեհամարին վճարել՝

բնակելի տուն 142.9 x 10000 x 0.086 = 122894 դրամ
կաթսայատուն 5.16 x 6000 x 0.086 = 2663 դրամ
զուգարան 1.32 x 6000 x 0.086 = 681 դրամ
խորդանոց 19.32 x 6000 x 0.086 = 9970 դրամ
ծածկ 6.0 x 6000 x 0.068 = 3096 դրամ
անասնաշենք 46.4 x 6000 x 0.086 = 23943 դրամ
ծածկ 14.83 x 6000 x 0.086 = 7653 դրամ
ծածկ 27.2 x 6000 x 0.086 = 14035 դրամ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ,Անուշ,Արևիկ,Սասուն Սարգսյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

20 20թ. հոկտեմբերի 15
գ.Հացավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 52-Ա

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԱԿՏ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի <<Հացավանի Հ.Մանուկյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Ս.Սահակյանի դիմումը՝

որոշում եմ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի <<Հացավանի Հ.Մանուկյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ին տալ տարածքի ցանկապատման աշխատանքների ավարտական ակտ /շահագործման թույլտվություն/:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

2020 թ. հոկտեմբերի 22
գ.Հացավան